

ԼԵՌ ԿԱՄԱՐԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՖԵԼԻԵՏՈՆՆԵՐԸ

ՀԿ(բ)Կ կենտկոմին ուղղված 1928 թ. սեպտեմբերի 7-ի նամակում*

Հայ մեծանուն երգիծաբան Լեռ Կամսարը (1888-1956) Հայաստանի Առաջին Հանրապետության օրոք գնահատված ու պահանջված գրողներից էր, ով իր ֆելիետոններում ի ցույց էր դնում հայ հասարակության թերի կողմերը, նուրբ հումորով ծաղրում էր ինչպես կուսակցություններին, այնպես էլ հայտնի անհատներին:

Նա վկայում է, որ 1920 թ. դեկտեմբերին ինքն ուրախությամբ է ընդունել անգամ Հայաստանի խորհրդայնացումը և ռուսական զորքերի մուտքը Երևան¹: Սակայն Հայաստանի հեղկոմի իրականացրած զանգվածային բռնաճնշումները, ձերբակալությունները շատերի թվում խռովում են նաև երգիծաբանի հոգին: Ուստի օրինաչափ է, որ նա ողջունում է Փետրվարյան ապստամբությունը և Հայրենիքի փրկության կոմիտեի իշխանությունը: 1921 թ. ապրիլի 2-ին խորհրդային ուժերի կողմից Երևանը վերագրավելուց հետո բոլշևիկյան վրեժխնդրությունից խուսափող հազարավոր հայորդիների հետ Լեռ Կամսարը նույնպես անցնում է Պարսկաստան և երկու ամիս հաստատվում Թավրիզում: Այստեղ նա վայելում է Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի հովանավորությունը: 1921 թ. մայիսի 24-ին Թավրիզի Արամյան թատրոնում հաջողությամբ բեմադրվում է նրա «Կասկածոտ ամուսին» կատակերգությունը²:

Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Խորհրդային Հայաստանի իշխանությունները քայլեր ձեռնարկեցին Երևանից ու նրա շրջակայքից հեռացած բնակչության իրենց բնակավայրեր վերադարձնելու նպատակով: 1921 թ. ապրիլի 10-ին Հայհեղկոմի հրապարակած «Ներման մասին» դեկրետի համաձայն ներում էր շնորհվում Փետրվարյան ապստամբության մասնակիցներին՝ բացի Հայրենիքի փրկության կոմիտեի անդամներից, վերջինիս Արտակարգ հանձնաժողովի կոլեգիայից, բարձր հրամանատարական կազմից և խմբապետներից: Հեղկոմի ապրիլի 23-ի «Ընդհանուր ներման մասին» դեկրետով վերացվեց նաև այս սահմանափակումը³:

Շատ մտավորականների թվում ոգևորված հայրենիք վերադարձավ նաև Լեռ Կամսարը՝ աշխատանքի անցնելով «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթի

Հայաստանի Խորհրդայնացումը, 1920 թ. 3 (47) հուլիս-սեպտեմբեր

2 (ժԲ) տարի, թիվ 3 (47) համահայկական համայն

*Ընդունվել է տպագրության 19.09.2014:

1 ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 216, թ. 26 շրջ.:

2 Տե՛ս Լեռ Կամսար, Բանտիս օրագիրը, Եր., 2010, էջ 29: Տե՛ս նաև՝ Սահակյան Վ., Երգիծաբանի կյանքը և ժամանակը (Լեռ Կամսարի կենսագրության ուրվագիծ), «Գարուն», Եր., 2009, N 7-8, էջ 88-89:

3 Տե՛ս ՀՄԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ II (1921թ. ապրիլի 2 – օգոստոսի 1), Էջմիածին, 1921, էջ 10-12, 20-21:

երգիծական բաժնում⁴: «Սկզբնական շրջանում երգիծաբանը շատ ձեռնտու էր սովետներին, քանի որ ուներ կամիթներ կրոնի, եկեղեցու, Դաշնակցության մասին: Բայց ինչ իմանային իշխանությունները, որ երգիծաբանները մի վատ հատկություն ունեն՝ ձաղկել այն իրականության թերությունները, որի ականատես-վկաներն են», - գրում է նշանավոր երգիծաբանի թոռնուհին՝ Վ. Թովմասյանը:⁵

1924 թ. Լեռ Կամսարը հրատարակում է «Անվավեր մեռելներ», իսկ 1926 թ.՝ «Ազգային այբբենարան» ժողովածուները: Իր սուր գրչի պատճառով նա շատ շուտով դասվեց «անընդունելի հեղինակների» շարքում, ում ստեղծագործությունները մեծ դժվարությամբ էին տպագրվում խորհրդահայ մամուլում, այդ թվում՝ «Խորհրդային Հայաստան» թերթում: Նրա ստեղծագործությունների տպագրության խնդիրը նույնիսկ դարձավ կուսակցության բարձրագույն մարմնի քննարկման առարկա: ՀԿ(Բ) Կ կենտկոմի նախագահության 1926 թ. փետրվարի 24-ի նիստում կենտկոմի առաջին քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը ներկայացրեց «Լեռ Կամսարի երգիծանքի հարցը», որից հետո որոշվեց. «Արգելել Լեռ Կամսարի երգիծանքների տպագրությունը»⁶:

Իր ստեղծագործությունների տպագրության արգելքի համար երգիծաբանը միամտորեն մեղադրում էր լուսավորության ժողովրդական կոմիսար և «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթի խմբագրական խորհրդի անդամ Ասքանազ Մոավյանին, նաև՝ Հայկոմկուսի մյուս ղեկավարներին: Սակայն խնդիրը ոչ թե անձերով, այլ արդեն խորհրդային ամբողջատիրական համակարգով էր պայմանավորված, ուր ազատ խոսքի և մտքի ցանկացած դրսևորում արգելվում էր: Իսկ Լեռ Կամսարի նկատմամբ առանձին ղեկավար անհատների (մասնավորապես Սարգիս Լուկաշինի) հոգատար վերաբերմունքը սոսկ բացառությունների թվում էր:

1928 թ. ապրիլի 4-ին գումարված ՀԿ(Բ)Կ կենտկոմի պլենումը որոշեց Հայկ Հովսեփյանի փոխարեն Կենտկոմի առաջին քարտուղար առաջադրել Հայկազ Կոստանյանին: Նոր քարտուղարի նշանակումը հայ մտավորականության որոշ շերտերի մոտ մշակույթի, գրականության նկատմամբ տարվող քաղաքականության փոփոխության հույսեր առաջ բերեց: Սրանով էին պայմանավորված ՀԿ(Բ)Կ կենտկոմի նոր ղեկավարությանն ուղղված նրանց նամակ-խնդրագրերը:

1928 թ. սեպտեմբերի 7-ին ՀԿ(Բ)Կ կենտկոմ ուղարկած իր նամակում գրականության բնագավառում պետության և իշխող կոմկուսի որդեգրած քաղաքականության քննադատությամբ և իրեն անգործ թողնելու, աշխատանքները չտպագրելու բողոքով Լեռ Կամսարը մեղադրանքի պյունին էր գամում Ա. Մոավյանին՝ խորհրդային համակարգի բացասական կողմերը խտացնելով նրա անձի մեջ: Նա չէր վարանում նույնիսկ հայտարարել Խորհրդային Հայաստանում ազատ մամուլի բացակայության մասին: «Եթե մամուլի ազատության նախկին շրջանումն ըլլայի, ես հողված մը գրեի պիտի թերթին մեջ, որուն վերնագիրը ըլլար «Քանի Մոավյանը ողջ է, Դաշնակցությունը չի մեռներ»»⁷, - գրում էր երգիծաբանը:

Եվ ահա իր իսկ խոսքերով՝ նման «շատ լուրջ ու դրամատիկական» նամակի ստեղծած տպավորությունը ցրելու համար Լեռ Կամսարը վերջում ներկայացրել է 12 ֆելիետոն: Դրանց մեջ Ա. Մոավյանի նկատմամբ Լեռ Կամսարի վերաբերմունքը լավագույնս արտահայտված է հատկապես «Ունիվերսալ հրացան» և «Թվաբանական խնդիր» ֆելիետոններում:

Լեռ Կամսարի ինքնագիր նամակը պահվում է Հայաստանի ազգային արխիվի N 1 ֆոնդում (ՀԿԿ կենտկոմ)՝ ֆ. 1, ց. 8, գ. 216, թթ. 26-29 շրջ.: Երգիծաբանի կենսագրության վերաբերյալ նոր մանրամասներ բացահայտող այս նամակը և ֆե-

4 Տես Լեռ Կամսար (ծննդյան 120-ամյակի առթիվ), «Գիտության աշխարհում», Եր., 2008, N 4, էջ 15:

5 Լեռ Կամսար, նշվ. աշխ., էջ 29-30:

6 ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 11 շրջ.:

7 Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 216, թ. 27:

լիետոնները հրապարակվում են առաջին անգամ: Հրապարակման ժամանակ մեր կատարած հավելումները ներկայացված են ուղղանկյուն փակագծերում (||):

Համո Կ. Սուրիասյան
Պապրւմ. գիրք. թեկնածու

ԱՐԽԻՎ

NEWLY DISCOVERED FEUILLETONS OF LER KAMSAR

In a the letter addressed to the Central Committee of AC(b)P on
September 7, 1928

Hamo K. Sukiasyan

НОВОВЫЯВЛЕННЫЕ ФЕЛЬЕТНЫ ЛЕР КАМСАРА

В письме адресованном ЦК КП(б)А
7-го сентября 1928 года

Амо К. Сукиасян

ՆԱՄԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻՆ

(գանգառի փոխարեն)

7 սեպտեմբերի 1928 թ.
Երևան

Հ (ԺԲ) տարի, թիվ 3 (47) հուլիս-սեպտեմբեր, 2014

ՎԷՆ համահայկական հանդես

Վերջերս մեր թերթերու մեջ գրականության մասին երեցած հոդվածներեն կերևի, որ կուսակցությունը լուրջ կերպով կը մտահոգվի գեղարվեստական գրականության ներկա անմխիթար վիճակով և կուզե դարմանել զայն:

Իրապես բավականին դժվար է բացատրել, թե նյութական այս գովելի շինարարության շրջանին հոգեկանը ինչու՞ այսքան պիտի կաղա: Ինչու՞ մեր գրականությունը բաղկանա քանի մը երկար ու կարճ տողերե բաղկացած ոտանավորներից ու չբաղկանա վիպական հատորներե, կոմեդիաներե ու դրամաներե:

Կկարծե՞ք, եթե ծնված ըլլար նոր Րաֆֆի մը, որ գրեր իր նոր «Կայծերը», պետք պիտի մնար ագիտ-պրոպ րաժնի՞⁸ ներկա ծավալեն:

Չեն կարծեր:

Սակայն այդ նոր Րաֆֆին չծնվեց: Չծնվեց, վասնզի գրողը՝ հոգեկան այդ «սպեց»-ը⁹, մեր առօրյային մեջ չի գնահատված այնպես, ինչպես մարմնավոր «սպեց»-ները: Ավելին: Հոգևոր «սպեց»-ը կհալածվի նույնիսկ այն մարդու կողմէ, որուն հանձնված է այդ ֆրոնտի պահպանությունը¹⁰:

Վասնզի սուտ ու սխալ, հաճախ քանդելու արժանի տուն շինող ճարտարապետ

8 Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության կենտրոնական կոմիտեի (ՀԿ(Բ)Կ կենտկոմ) ագիտացիոն-պրոպագանդիստական բաժինը, որը վերահսկողություն էր իրականացնում նաև հրատարակվող գրականության նկատմամբ:

9 Մասնագետ (ռուսերեն):

10 Ակնարկում է Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսար Ասքանազ Մնավյանին:

մը կամոնի հազարներ իր այդ անբարեխղճության կոթողին համար, իսկ անդէն ընդունված ու գովված հեղինակ մը տարիներով անոթի, կոմիսարներու դուռներն թափառեր ի խնդիր պատառ մը հացի ու չի գտեր:

Ահա այս է պատճառը, որ Խորհրդային Հայաստանի մարմնավոր ոտքը մեկ մեթրով երկար է հոգևոր ոտեն ու մեր երկիրը քալելիս անկարող է սարսափելի չկաղալ:

Պրոլետ գրողները, որք կպահվեն «գավոտ»-ի¹¹ հավերու խնամքով¹², ավելի շատ կչկացին, քան կուսակցության իդեոլոգիական¹³ նժարին վրա արժեքավոր ձու մը դրին: Շատերը անոնցմէ, ճարպակալած առատ սնունդէն, կորսնցուցեր են իրենց ածելու ընդունակությունն իսկ:

Մինչդեռ գրականությունը ուժեղ գենք է մասսաներուն ազդելու և չպետք է [այն] թերագնահատել:

Այսօր Անգլիան իր սասանեցնող նավատորմով աշխարհի մեկ մասն է միայն հաջողած գրավել, մինչ Շեքսպիրը իր գրքերով ողջ աշխարհն է տիրապետեր:

Գրողը կշեռքի պզտիկ թաթն է, որուն վրա դրված մեկ մսխալը հազարավոր փութ ծանրություն կքաշի մեծ թաթին մեջ:

Գրողը ջիղ է ու տրամադրություն: Նա ոգնի է կծկված ու կրացվի, երբ գիտի, թե իր առջևը կեցած է մեծահոգի մարդ մը:

Գրողը ժամացույց մըն է՝ շատ փոքր ու նոսր գործիքներն բաղկացած, որին պետք է մերձենալ միայն ժամագործի փոքրիկ ունեկիով:

Իմ՝ խորհրդային ութը տարիներու շրջանին ես միշտ իբրև կծկված ոգնի ապրեցա՝ փշերս ցից, որովհետև միշտ, երբ գլուխս պատյանես հանեցի, Մռավյանը¹⁴ առջես տեսա:

Մռավյանը ունեկի փոխարեն բաիի կոթով խառնեց իմ հոգին ամբողջ ութը տարի: Ու այսօր ես կանգնած ժամացույց մըն եմ՝ Հայաստանի պատեն կախ:

Մինչդեռ իմ «թիք-թաք»-երս հոգուտ ձեր կուսակցությանը հնչեցին ու ձեռք մը, եթե թշնամի չէր կուսակցությանը, չպիտի կասեցներ այդ շարժումը:

Ես բոլշևիկներու առաջին մուտքը Հայաստան¹⁵ մեծ ուրախությամբ ընդունեցի հիվանդությանս մահձին մեջ: Բժ[իշկ] Գրոյին¹⁶, որն այդ լուրը կրերեր ինձի, ըսի. «Չափազանց ուրախ եմ: Բոլշևիկներուն ինչ ըլլալը չեմ գիտեր թեև, բայց գիտեմ, որ անհրաժեշտ էր անգամ մը մաքրվեր սա դաշնակցական ճահիճը»:

Հիմա ձեզի կհարցունեմ. իմ այս տրամադրությունն ունեցող մեկը, եթե, փոխանակ Մռավյանին, Լուկաշինի¹⁷ նման մարդ մը հանդիպեր, միայն 2 գիրք¹⁸

11 Գործարան (ռուսերեն):

12 Նկատի ունի պետության հատուկ հոգածությունը պրոլետար գրողների նկատմամբ, ինչից գրկված էին «հին սերնդի» գրողները:

13 Գաղափարական (ռուսերեն):

14 **Ասքանազ Մռավյան** (1885–1929): Պետական–կուսակցական գործիչ. 1921–1922 թթ. աշխատել է որպես Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողկոմ, 1923–1929 թթ.՝ լուսավորության ժողկոմ և Ժողկոմխորհի նախագահի տեղակալ: Միաժամանակ եղել է «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթի խմբագրական խորհրդի անդամ:

15 1920 թ. դեկտեմբերի 2-ին Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների միջև Երևանում ստորագրված համաձայնագրի հիման վրա Հայաստանում հաստատվեց խորհրդային վարչակարգ: Դեկտեմբերի 4-ին, ռուս զինվորների ուղեկցությամբ, Երևան ժամանեց Խորհրդային Հայաստանի իշխանության բարձրագույն մարմինը հանդիսացող Հայաստանի հեղափոխական կոմիտեն:

16 **Գրո (Գրիգոր Տեր-Հակոբյան, 1887–1969):** Հայ հայտնի հոգեբույժ: 1918–1919 թթ. սոցիալիստ հեղափոխականների կողմից Հայաստանի Հանրապետության խորհրդարանի պատգամավոր:

17 **Սարգիս Լուկաշին (Սրապիոնյան):** Պետական–կուսակցական գործիչ. 1921–1922 թթ. եղել է ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար, 1922–1925 թթ.՝ Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ, 1925–1928 թթ. Անդրկովկասյան Դաշնության Ժողկոմխորհի նախագահի տեղակալ: Ստալինյան բռնաճնշումների զոհերից է, ձերբակալվել և գնդակահարվել է 1937 թ.:

18 Նկատի ունի իր «Անվավեր մեռելներ (հակակրոնական ֆելետոններ)» (Եր., 1924, 48 էջ)

կգրեր հոգուտ նոր օրինատացիայի¹⁹: Ո՛չ, տասներկուսը:

Դաշնակցությունը, որուն ողջ կյանքումս միայն քննադատած եմ հողվածներովս և որը բերնես քաղցր խոսք մը լսած չունի իր մասին, [19]18 թվին, երբ իմացավ անպաշտոն եմ, մեկ ժամվա մեջ կարգադրություն ըրավ:

Դաշնակցությունը մեկ ժամվա մեջ կարգադրեց այն, ինչ Լուսավորության ու արվեստի կոմիտեի Մեծականը չկարողացավ կարգադրել ութը տարվա մեջ:

Այսպէս «կմեղցունեն» Դաշնակցությունը, այսպէս կմոռցնեն Դաշնակցությունը:

Եթե մամուլի ազատության նախկին շրջանումս ըլլայի, ես հողված մը գրելի պիտի թերթին մեջ, որուն վերնագիրը ըլլար «Բանի Մեծականը ողջ է, Դաշնակցությունը չի մեռներ» ...

Ընկերնե՛ր, գրելով սույն նամակը, ունեմ այն խորը համոզումը, որ Կոմիտեն սանկցիա չի տար Մեծականի կողմէ իմ հանդէպ ցույց տված պիղատոսյան վերաբերմունքին:

Ես հույս ունեմ, որ Կոմիտեն իր ձախ ձկուծովը դեն կգլորի իմ առվի մեջ ինկած այն կաղինի մեծության քարը, որ անշարժելի ապառաժ է թվացել Մեծականին ամբողջ ութը տարի:

Ես, այլևս համբերությանս պաշարը սպառած, կուզեմ ձեր հեղինակավոր ձայնը լսել այն մասին, թե իրավունք ունիմ այս երկրեն մեջ ապրել իբրև մարդ, թե՛ ոչ:

Ինչու, որ ձանձրացա «դիսկուսիոն կարգով» ապրելէ:

Բազմանդամ ընտանիքի տեր եմ ես ու պատասխանատու անոնց կյանքին համար:

Խորին հարգանք՝ Լեւ Կամսար

Հ. Գ. Հակառակ ջանքերուս՝ նամակս դուրս եկավ շատ լուրջ ու դրամատիկական: Այդ տրամադրությունը ջնջելու համար կարդամ ձեզի էջ մը իմ նոթերու տետրակես:

ՈՂՈՐՄԱԾ ՍԱՄԱՐԱՑԻՆ²⁰

Ես կապրելի:

Հանկարծ վրաս հարձակվեցավ կարիքը, վիրավորեց, խոցոտեց, սոված թողուց ու գնաց:

Հետզհետե այդ ճամբով անցան Կարինյանն²¹ ու Մեծականը. տեսան ինձի, կարեկցեցին, գլուխնին շարժեցին, «խոսք» ու «խոստում» քսեցին վերքիս ու անցան իրենց գործին գնացին:

Անոնք Ղևտացի քահանաներն էին ...

Պատահեցավ, որ միևնույն ճամբով անցնեք նաև Լուկաշինը: Տեսնելով՝ անմիջապես վար իջավ իր գրաստեն, շոշափեց, լվաց, ձեթ քսեց վերքիս, դրավ գրաստին վրա, տարավ խմբագրատուն²² ու ըսավ Չուբարին²³.

– Խնամի սա հիվանդին, ես Թիֆլիս կերթամ, վերադարձիս կը վճարեմ ծախքերը:

և «Ազգային այբբենարան» (Եր., 1926, 165 էջ) գրքերը:

¹⁹ Կողմնորոշում (ռուսերեն):

²⁰ Ֆելիետոնը Նոր Կտակարանի «Բարի սամարացին» առակի վերափոխված տարբերակն է (հմմտ. Ղուկ., Ժ 29–37):

²¹ Արտաշես Կարինյան (1886–1982): Խորհրդային պետական–կուսակցական գործիչ, գրականագետ: 1924–1928 թթ.՝ Խորհրդային Հայաստանի Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահ:

²² Նկատի ունի «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրատունը:

²³ Եղիա Չուբար (1897–1938): Հրապարակախոս, 1920–ական թվականներին «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրակազմի անդամ, խմբագիր: Անհատի պաշտամունքի գոհ:

Ողորմած սամարացի: Քո մեծահոգի հովանավորությանդ 5 ամիսներուն ես հատոր մը գրեցի²⁴, որուն շապիկին վրա, սակայն, կվարանեմ տպիլ «գրեց Լեո Կամսար»: Ինչու՞, որ այդ հատորը դուն գրեցիր իմ ձեռքով:

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ

Պաշտոն մը ձեռք բերելու համար 216 անգամ լուսժողկոմ Մեավյանին գացի: 78 անգամ միայն արժանացա իր տեսությանը:

Այդ 78 անգամեն՝

Օր մը «ցավոք սրտիվ պաշտոն չկա» ըսավ ու գլուխը աջ թեքեց, օր մը «չկա» ըսավ՝ ձախ ծռեց, օր մը ձեռները անհույս օդին մեջ տարածեց, օր մը կրծքին ծալեց, օր մը դաստակը ճակատին «մտածեց», օր մը «մտածելու ճար մը չգտավ» ու այսպես ութը տարի:

Այս վերջին տարին, սակայն, ոչինչ չէր շարժեր, վասնզի անցնող յոթը տարիներն չէր մնացած անդամ մը, որ շարժած չըլլար ...

ՍԱՂՄՈՍ Ա

Ողորմիր ինձի, Տէր, փրկիր ինձի, գթա՛: Ոսկորներս սա շաբաթ մըն է կճարճատին Սոցապի²⁵ կասսային առջև, 11 ռուբլի 50 կոպեկի համար ինձի մի սղմիր պատին, Տե՛ր:

Ըսի, որ ետևես չիրեն, Տէր, ըսի որ կարգ պահպանեն: Չե՞ երեկ էր, որ առջես կեցողը ինձի դարձավ ու «քոռ» ըսավ իր ոտքը կոխելու համար: Ինչ մեղավոր էի ես, Տե՛ր, չե՞ ետևես հրեցին, ողորմած:

ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՀՐԱՑԱՆ

Ամեն անգամ, երբ խմբագիր Մեավյանը իր միտքերուն երգիծական ձև տալ ուզի, ինձի կկանչի:

Իր կարծիքով գրողը «Տիր»-ի՝ պատեն կախված այն ունիվերսալ հրացանն է, որ յուրաքանչյուր մարդ, ով 10 կոպեկ տալ ուզի, իրավունք ունի վերցնել այն և իր նշանակետին կրակել:

Իմ խոնարհ կարծիքով՝ այս հասկացողությամբ արվեստը երկար ճամբա չունի կտրելու:

ՅՈԹԺԱՄՅԱ ԵՐՁԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Գիշեր. երագիս մեջ պաշտոն ունեի, սկսել էի ապրել, երբ հանկարծ պատու-հանիս տակ «լավ մածու՛ն, լավ մածու՛ն» պոռագին ու արթնացա:

Գետինն անցնես, գյուղացի՛, քո «լավ մածուն»-ին հետ միասին: Չձգեցիր, որ զարթնելես առաջ գեթ ամսական մը առնեի ...

ՍԱՂՄՈՍ Բ

Անգործությանս փաստաթուղթերը կորսնցուցեր եմ, Տէր: Գտիր և ինձի տուր: Ես ի՞նչ պատասխան տամ Բորսայի ու Սոցապի անթիվ պատուհաններուն:

Առաջին պատուհանը նորեն պահանջե պիտի տեղեկանք մը «առ այն», որ կրճատված եմ իրոք, երկրորդը՝ «առ այն», որ երկու տարվա աշխատանքի ստաժ ունեմ, երրորդը՝ որ հինգ անձե բաղկացյալ ընտանիք մը ունեմ, չորրորդ պատուհանը՝ «ի՞նչ եկամուտներ ունես» կձայնի, հինգերորդ պատուհանը կուզե գիտնալ միայն երեխաներուս թիվը, վեցերորդը՝ միլիցիայեն կղրկի բերելու տեղեկանք մը «առ այն», որ չքավոր եմ, յոթներորդը՝ նորեն տեղեկանք մը երեխաներուս մասին, որ կենդանի են ու այսպես անվերջ:

Կարողություն չունեմ, Տէր, ուժերս սպառեցան աս անկուշտ պատուհաններուն

24 Նկատի ունի «Ազգային այբբենարան» ժողովածուն:

25 Սոցիալական ապահովության ժողովրդական կոմիսարիատ:

«փաստաթուղթ» կրելով: Լսիր N 5801 անգործիս աղերսը և ազատի ինձի:
Եվ անունդ թող սուրբ ըլլա, ամեն:

ԻՐԱՐՈՒ ՕԳՆՈՂՆԵՐ

Ամեն անգամ, երբ խոսք կըլլա պրոլետ գրողներու²⁶, աշխատավորականներու²⁷ և Հայ գրական ընկերության²⁸ մասին, միշտ հետևյալ պատմությունը կհիշեմ:

Այգետեր մը, հրապարակ իջնելով, երեք մշակ կվարձի ու իր այգին փորելու կղրկի: Կեսօրին, երբ տերը իր այգին կիջնի աշխատանքն ստուգելու, կտեսնի բնավ աշխատանք կատարված չէ. երեք մշակներ փոքր հեռավորությանց վրա պառկած երկինք կնայեն:

Ինչ կենես, –կհարցնի այգետերը առաջին մշակին:

Կհանգստանամ, –կպատասխանի առաջին մշակը շփոթված:

Դու՞ն ինչ գործի ես, –կհարցնի երկրորդին:

Ես ալ կօգնիմ ընկերոջս, –կըսե երկրորդը, որը չէր լսած, թե ինչ էր պատասխանած առաջինը:

Իսկ դու՞ն, –կդառնա տերը երրորդին:

Ես ալ կհսկեմ երկու ընկերներուս աշխատանքին ...

ԿՈՒՋԵՆԻ ԳԻՏՆԱԼ

Հունաստանեն եկած հայտնի գյուղատնտես Աշոտ Արշակունին, որ Հայաստան էր եկել 80 տեսակ հազվագյուտ կուլտուրաներ մշակելու, այսօր սրողոյած կպատրաստվի Ադրբեջան մեկնելու:

Նորագավիթի նախագահը վարել է տված այն հողամասը, որուն վրա հիշյալն կողմն տնկված էր 150 հազար թթենի:

Բայց Ադրբեջանի հողօռոյկումը, նախքան Արշակունիին իր երկիր տանելը, այդ նախագահին ձեռքը տղմելու է:

Հետաքրքիր է իմանալ. Ադրբեջանը երգիծաբանի ալ կարիք չու՞նի: Պիտի հարցնեմ մեյ մը:

Բայց ես վճռած եմ. Ադրբեջանի լուսօռոյկումը եթե գա ինձի տանելու, անկարելի է, որ երթամ, մինչև անիկա Միավյանի ձեռքը չսեղմի ...

ՍԱՂՄՈՍ Գ

Մինչև երբ չլսես ինձի, Տեր: Վեց ռուբլի դրամ տուր ինձի, ողորմա՛ծ: Միլիցիան կսպառնա չորս օր պարտադիր աշխատանքի տանել, եթե չվճարեմ այդ գումարը: Չունեն փող: Պատվիրի, գեթ, ծանր քարեր չդնեն կոնակիս, ես «գրիժա» ունեմ, Տեր: Կամ չկամ ավելի թեթև գործ: Ո՞վ կվճարա Բանկոռայի²⁹ ճաշարաններու պնակները: Թող գործը դժարին ըլլա, թող 4-ի տեղ 6 օր աշխատեմ, ես աշխատանքե փախչողը չեմ, Տեր:

Ձեռքը կմոտենա արդեն: Ինչու՞ այդքան արագ կպտտցունես երկիրը արևին շուրջը, Տեր, դուրս չգիտեմ, որ փայտ առնելու կարողություն չունեմ:

ՍԱՂՄՈՍ Դ

Օգնություն՛ն, օգնություն՛ն, միլիցիան բնակարանս մտնելով գրասեղանս գրեց պարտքիս տեղ՝ աճուրդի հանելու համար:

Ան գտավ, որ գրասեղանն ավելորդ կարասի մըն է ու «տնտեսությունս չի

26 Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան հիմնադրվել է 1922 թ. դեկտեմբերին:

27 Հայ աշխատավորական գրողների միությունը հիմնադրվել է 1927 թ., նախագահը Դ. Դեմիրձյանն էր:

28 Հայ գրական ընկերությունը հիմնադրվել է Երևանում 1926 թ. սեպտեմբերին: Այստեղ ընդգրկված էին, այսպես կոչված, «աջ ուղեկիցները» (Սալման, Ս. Կանայան և ուրիշներ):

29 Բանվորական կոոպերատիվների միություն:

տուժեր»։ Ու գիտնւ, Տէր, որու բերավ այդ «պաշտոնական» ակտը վկայելու՝ մեր դիմացի թուրք կովարած Իբրահիմը ...

Բխնվորական] միլիցիան արդեն համալ³⁰ բերավ վերցնելու ու կիրամայի պարպել թուղթերն գրասեղանս։

Տէր, կաղաչեմ, հասկցուր «վկա» Իբրահիմին, որ գրասեղանը նույնն է գրողին, ինչ որ սալը դարբնին ու դագգյահը՝ ատաղձագործին։

Շտապով միածինդ աշխարհ դրկե՝ տեղվոյն վրա քննելու համար սա անակնկալը։ Իսկ եթե ոչ, եթե պիտի երկնքն անտարբեր դիտես միայն, գեթ գաղտնի պահի լուրը, որ արտասահման չհասնի։

Դաշնակցությունը, որ համակ ականջ դարձած Խորհրդային Հայաստանն միայն պակասություն կուզէ լսել, երբ իմանա, որ Հայաստանի կառավարությունը ուրը տարի Խորհրդային մամուլին աշխատակցած «տաղանդավոր» գրողի մը գրասեղանն իբրև ավելորդ իր աճուրդի կհանի վեց ռուբլիի համար, չարախնդ քան-քան մը պիտի փրցունի արտասահմանյան մամուլին մեջ, Տէր։ Գիտեմ, Տէր, պիտի ըսես՝ ինձի ինչ, Մոսկվանն է մեղավոր, բայց մի ըներ, Տէր, ներիր, վերջինս այնքան զբաղված է, որ իր կառավարության իրական շահերը մոռցեր է։

ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Միշտ, երբ «Խորհրդային» Հայաստանի» ավագ խմբագիր Մոսկվանը Մոսկվա գործուղվի, ես, օգտվելով իր բացակայութենէն, ամսական 10 ֆելիետոն կգրեմ նույն թերթին մեջ։

Արդ, պետք է գտնել՝

ա) քանի՞ ֆելիետոն պիտի գրեի, եթե Մոսկվանը ութ տարով Մոսկվա գործուղվեր։

բ) այդքան ֆելիետոններ քանի՞ հատոր կրնային կազմել և՛

գ) հայ գրականությունը կաղքատանմը, թե կհարստանար, եթե կհարստանար՝ որքան։

ՄԱՐԲՍԻԶՄԸ ԱՆՍԻԱԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԶԷ

«Կեցությունը կրնորոշէ մարդու գիտակցությունը կամ գիտակցությունը մարդու կեցությամբ է պայմանավորված», –կըսէ Մարքսը, ինչ որ չի համապատասխաներ իրականության։

Եթե այս թեորիան շիտակ ըլլար, թույն պիտի կաթեր այն կառավարության հասցեին, որուն ժամանակ այս խայտառակ «կեցությունը» ունեցա։

Ո՛չ, ոչ։ Հազար անգամ լավ է, որ մարքսիզմը սխալ ըլլա, քան իմ «կեցությունը կրնորոշէ իմ գիտակցությունը»...

Հոս կընդհատեմ ընթերցումս, ինչու՞, որ անիկա վերջ չունի։

Նույն հարգանքը՝ միևնույնը։

30 Բեռնակիր։